ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2012թվականի N 382-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Դիլիջան քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի 8 ամսվա գործունեության արդյունքները, անհրաժեշտություն է առաջացել վերանայել 2012թ. բյուջեի ծախսերի նախահաշիվներում որոշ հոդվածների տեղաշարժի և ֆինանսավորման ժամկետների հարցերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջան քաղաքային համայնքի 2012թ.բյուջեով նախատեսված «Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում » /բաժին 01 խումբ 01 դաս 01/ հոդված 5122 ծախսերի նախահաշվից կատարել տեղաշարժ 6000000 դրամ՝ «Նախադպրոցական կրթություն» /բաժին 09, խումբ 01, դաս 01/ հոդված 5113- 5000000 դրամ և հոդված 5122-1000000 դրամ:
2. Դիլիջան քաղաքային համայնքի 2012թ.բյուջեով նախատեսված «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ » /բաժին 01 խումբ 03 դաս 03/ հոդված 4212-ից կատարել տեղաշարժ հոդված 4111:- 4368 դրամ
3. Հանձնարարել ֆինանսական բաժնի պետ Գ.Դավթյանին կազմել համապատասխան եկամուտների և ծախսերի նախահաշիվների փոփոխությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 03
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2012թվականի N 383-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 0159-0019 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 0159-0019 ծածկագրով հողամասի մի մասի՝ 183.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն ՀՀ կառավարության 21 հուլիսի 2005 թվականի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է Բնակավայրերի հողերի կազմում, մասնավորապես՝ այլ հողեր /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված "Բնակավայրերի հողերի" 0159-0019 ծածկագրով հողամասի մի մասին, 183.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 3/8:
2. Վերը նշված "Բնակավայրերի հողերի" 183.0քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել "Հասարակական կառուցապատման հողերի" կազմ և հաշվառել համայնքի հողերի ֆոնդի տարեկան հաշվեկշռում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 0159-0019 ծածկագրով հողամասի մի մասի՝ 183.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 03
ք.Դիլիջան